

# 168Ժամ շաբաթաթերթ

№ 104(193)

29 սեպտեմբեր, 2006թ.

## Վագրի մրցունակությունը կաղում է

Հայաստանն իր մրցունակությամբ գրավում է 82-րդ տեղը՝ 125 երկրների շարքում: «Համաշխարհային տնտեսական ֆորումի» (ՀՏՖ) կողմից պարբերաբար հրապարակվող «Համաշխարհային մրցունակության զեկույց - 2006-2007»-ում մեր երկիրը նախորդ տարվա համեմատ մեկ տեղով նահանջել է մրցունակության ինդեքսում:

Այս մասին երեկ հայտարարեց «Տնտեսություն եւ արժեքներ» հետազոտական կենտրոնի նախագահ Մանուկ Հերզնյանը, որի ղեկավարած կազմակերպությունը ՀՏՖ-ի գործընկերն է եւ մասնակցել է զեկույցի պատրաստմանը՝ մեր երկրի մասով:

Ի դեպ, զեկույցի տվյալներին հասարակությունը պետք է ծանոթանար միայն երեկվա ասուլիսի ժամանակ, եւ ոչ ավելի շուտ, սակայն լրահոսին հետևող մարդիկ եւ հատկապես լրագրողները Հայաստանի եւ մյուս երկրների ցուցանիշներին արդեն ծանոթ էին: Ըստ պրն Հերզնյանի, տեղի է ունեցել պայմանավորվածության խախտում: Բանն այն է, որ ՀՏՖ-ն զեկույցը հրապարակելուց մի քանի օր առաջ այն տրամադրում է մի քանի խոշոր լրատվական գործակալությունների՝ չհրապարակելու պայմանով: Սակայն այս անգամ այդ պայմանը խախտել է «Ֆրանս-պրեսը», եւ գրեթե բոլոր ԶԼՄ-ները (այդ թվում եւ հայկական) արդեն հասցրել են հրապարակել այդ տվյալները: Մանրամասները, սակայն, ներկայացվեցին երեկ, եւ դրանք բավական հետաքրքիր էին:

Ըստ ՀՏՖ մասնագետների, մրցունակությունը երկրի տնտեսական վիճակը բնութագրող ավելի համապարփակ ցուցանիշ է, քան տնտեսական աճի տեմպը: Այն նաեւ ուղղակիորեն ազդում է միջնաժամկետ եւ երկարաժամկետ հատվածում տնտեսական աճի հնարավորությունների վրա:

Զեկույցի պատրաստման համար օգտագործվել են վիճակագրական տվյալներ եւ հարցումներ: Մեր երկրում հարցմանը մասնակցել է տարբեր ընկերություններում ղեկավար պաշտոններ զբաղեցնող 95 մարդ: Մ. Հերգնյանի խոսքերով, ձեռնարկությունների ընտրությունը կատարվել է ՀՆԱ-ի մեջ տարբեր ոլորտների տեսակարար կշիռն համապատասխան:

Մրցունակության համաշխարհային ինդեքսն իր մեջ ներառում է 3 ենթաինդեքսներ՝ բազային պայմաններ (ինստիտուտներ, ենթակառուցվածքներ եւ այլն), արդյունավետության խթանիչներ (շուկաների արդյունավետություն, տեխնոլոգիական պատրաստվածություն) եւ նորարարություններ ու բիզնեսի զարգացածության գործոններ: Ընդ որում, տարբեր երկրների համար վերը նշված բաղադրիչներն ունեն տարբեր տեսակարար կշիռներ՝ հաշվարկման մեջ:

Որքան թույլ է զարգացած երկիրը (դա որոշվում է 1 շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ով), այնքան բազային պայմաններն ավելի շատ են հաշվի առնվում: Հայաստանը, որպես մեկ շնչի հաշվով 2000 դոլարից պակաս ՀՆԱ ունեցող երկիր, ընդգրկված է առաջին խմբում, որտեղ բազային պայմանները կազմում են 50% իսկ նորարարություններն՝ ընդամենը 10%:

Ահա այս ամենը հաշվի առնելով՝ Հայաստանը գրավել է 82-րդ տեղը: Ըստ Մ. Հերգնյանի, դժվար է սա անվանել նահանջ, քանի որ Հայաստանի միջինացված միավորը նույնն է մնացել՝ 3.75: Բացի այդ, այս տարի ցուցակին ավելացել են եւս 8 երկրներ, որոնցից միայն մեկն է առաջ անցել Հայաստանից:

Շվեյցարիան գրավել է առաջին տեղը, որն անցյալ տարի զբաղեցնում էր ԱՄՆ-ը: Միացյալ Նահանգներն այս տարի նահանջել է 6-րդ տեղը: Առաջին հնգյակում միմյանց հաջորդում են Ֆինլանդիան, Շվեդիան, Դանիան եւ Սինգապուրը:

ԱՊՀ երկրներից մեզնից առաջ են անցել Ղազախստանը (56-րդ տեղ), Ռուսաստանը (62), Ադրբեջանը (64) եւ Ուկրաինան:

Այն, որ Ադրբեջանն իր տնտեսական աճով մեզնից շատ առաջ է, ինչ-որ տեղ հասկանալի է՝ կա նավթի գործոնը: Իսկ մրցունակության հարցում ինչպե՞ս բացատրել այս իրավիճակը: «Տնտեսություն եւ արժեքներ» կենտրոնի խորհրդի անդամ Գազիկ Գաբրիելյանի խոսքերով, նավթի գործոնն ազդում է ոչ միայն ՀՆԱ-ի ցուցանիշի վրա, այլեւ նպաստում է ներդրումներին, հետեւաբար նաեւ՝

տեխնոլոգիական պատրաստվածության ու մրցունակության բարձրացմանը: Մինչդեռ, եթե նայում ենք առանձին ենթախնդրներին, ապա այս պնդումը վիճելի է թվում: Օրինակ, բազային պահանջների առումով Հայաստանը 81-րդ տեղում է, իսկ Ադրբեջանը՝ 56 Մինչդեռ այստեղ հաշվի առնվող ինստիտուտների բարելավման տեսակետից գումարն այդքան էլ էական գործոն չէ: Նշենք, որ այս ենթախնդրում մենք Ադրբեջանին գերազանցում ենք միայն առողջապահության եւ միջնակարգ կրթության ոլորտում: Այստեղ մենք գտնվում ենք 62-րդ տեղում, իսկ մեր հարեւան երկիրը՝ 96-րդ:

Ամենավատթաք վիճակում են «շուկայի արդյունավետություն» եւ «բիզնեսի զարգացման մակարդակ» ցուցանիշները: Երկու դեպքում էլ մեր երկիրը զբաղեցնում է 104-րդ տեղը: Ըստ զեկույցի հեղինակների, ցածր վարկանիշները մասնավորապես արտացոլում են տնտեսական աճի բնույթը, որը տեղի է ունենում հիմնականում շինարարության եւ գյուղատնտեսության հաշվին: Իսկ սրանք կողմնորոշված են հիմնականում դեպի ներքին շուկա, թույլ են առնչվում միջազգային շուկաների հետ, եւ, ինչպես ասվում է զեկույցում, «չեն հանգեցնում նոր, բարձրակարգ բիզնես ունակությունների ներկրմանը երկիր»:

Բավական հետաքրքիր են (թեեւ կանխատեսելի) մեր գործարարների շրջանում անցկացված հարցման արդյունքները: Որպես բիզնեսի համար ամենախնդրահարույց գործոն՝ հայաստանցի բիզնեսմեները նշել են ֆինանսավորման աղբյուրների դժվար մատչելիությունը (18.26%): Դժգոհությունների առումով երկրորդ տեղում կոռուպցիան է (16.09%), հետո գալիս են հարկային քաղաքականության, վարչարարության եւ ենթակառուցվածքների թերզարգացածության խնդիրները:

Ինչպես գիտեք, հայաստանցի գործարարների համար թիվ մեկ խնդիրն այսօր դրամի սրընթաց արժեւորումն է: Սակայն «արտարժույթի փոխարժեքի կարգավորումը» մեր գործարարների ընդամենը 4.79%-ն է համարել ամենախնդրահարույց գործոն:

Սա կարելի է բացատրել նրանով, որ հարցումներն անց են կացվել 2006թ. փետրվար-ապրիլ ամիսներին, իսկ դրամի արժեւորման վերջին փուլը սկսվեց մայիսի վերջերից: Մանուկ Հերգնյանը տեղեկացրեց, որ ներկայումս իրենք աշխատում են Հայաստանի մրցունակության առանձին զեկույցի վրա, որը կիրառարակվի հաջորդ տարի: Միգուցե այստեղ այս խնդրին ավելի լայն ուշադրություն կհատկացվի:

Մեզ բնականաբար հետաքրքրում էր՝ զեկույցում կա՞ մի որեւէ ցուցանիշ, որով մեր երկիրն առաջինը լինի: Օրինակ, անցյալ տարի Հայաստանն առաջին տեղում էր օտարերկրացիների աշխատանքի ընդունվելու հեշտությամբ: Այս տարի նահանջել ենք 6-րդ տեղը: Իսկ առաջին տեղը գրավել է մեր մյուս հարեւանը՝ Վրաստանը:

Առավելագույնը, որով կարող ենք պարծենալ՝ սղաճի ցուցանիշն է: Այդ ցուցանիշով Հայաստանը 125 երկրների մեջ գրավում է 4-րդ տեղը: Միայն թե պարզ չի, սրա համար ո՞ւմ ենք պարտական՝ Կենտրոնական բանկի՞ն, որը կարգավորում է գնաճը, թե՞ այդ գնաճի ցուցանիշները հաշվարկող եւ ներկայացնող Ազգային վիճակագրական ծառայությանը: